ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ
amirjanyan.hasmik@rambler.ru

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ (XVIII Դ. ՎԵՐՋ)*

Բանալի բառեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, հայկական թեմ, քաղաքական, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ղուկաս Կարնեցի, նամակագրություն, պետական, հնդկահայ։

Ներածություն

Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու (1763-1780) մահից հետո կաթողիկոս ընտրվեց Ղուկաս Կարնեցին (1780-1799)։ Որպես իր աշակերտի, օգնականի ու վստահելիի Սիմեոն Երևանցին կտակում նրա անունն էր հիշել իբրև իր հաջորդի։ Աթոռակալության ամբողջ ընթացքում Ղուկաս Կարնեցին թղթակցում էր Ռուսաստանի, Թուրքիայի, Վրաստանի, Իրանի, անգամ հեռավոր Հնդկաստանի, Չինաստանի և այլ վայրերի հայ երևելիների, հայ ու այլազգի հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչների հետ։ Նրա նամակներն ուշագրավ տեղեկություններ են պարունակում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի, Էջմիածնի վանքի տնտեսական վիճակի, այնտեղ կատարված շինարարական աշխատանքների, նվիրակ-

* Ներկայացվել է 04. IV.2022թ., գրախոսվել է 20.V. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.։

ների[1] գործունեության, հայկական թեմերի, հարևան երկրների քաղաքական իրավիճակների և այլնի մասին: Նամակների մի մասն էլ շնորհակալական ու օրհնության գրություններ են:

Ազգային-քաղաքական հարցերի քննարկումը Ղուկաս Կարնեցու և հնդկահայ գործիչների միջև

Ղուկաս Կարնեցու նամակների որոշ մասն ուղղված է հնդկահայ գործիչներին ու Հնդկաստան գործուղված նվիրակներին և գրեթե ուսումնասիրված չէ: Հնդկաստանն առհասարակ հայկական կարևորագույն թեմերից մեկն էր, ոչ միայն հոգևոր հասույթի ստացման, այլև տեղի հայ գործիչների կողմից Էջմիածնի վանքի և, առհասարակ, Հայաստանի նկատմամբ հայրենանվեր գործունեության տեսանկյունից: Նամակները պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի: Առաջինի մեջ ներառված են ազգային-քաղաքական բնույթի նամակները, իսկ համեմատաբար ծավալուն հոգևոր-մշակութայինները՝ երկրորդի:

Առաջին խմբի նամակները տեղեկություններ են հաղորդում Հայաստանի տարածքում վրացական և Երևանի խանի զորքերի ընդհարումների, հյուսիսկովկասյան լեռնականների արշավանքների ու Երևանի խանությունում քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Վ. Գրիգորյանն իրավացի է՝ գրելով, որ «Ղուկասի նամակները համարյա միակ սկզբնաղբյուրն են այդ ժամանակ Երևանի խանության մեջ ստեղծված քաղաքական խառնակ կացության՝ ի նկատի ու-

[1] Նվիրակն Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով գործում էր հիմնականում հայկական գաղթավայրերում՝ հայության շրջանում կաթողիկոսի անունից Մայր Աթոռի համար կամավոր նվիրատվություններ ժողովելու համար:

նենալով 1784 թ. իրադարձությունները»[2]:

Դրանցում քննարկվում են նաև Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հարցեր: Ինչպես գիտենք, XVIII դ. վերջերին Կասպից ծովի առափնյա հատվածներում և Անդրկովկասում հաստատվելու Ռուսաստանի քաղաքականության ակտիվացման հետ կապված՝ հայ ազգային քաղաքական շրջանակներում արմատավորվեց ռուսական զորքի օգնությամբ երկիրը պարսկական տիրապետությունից ազատագրելու գաղափարը:

Հայ գործիչների համար, որպես այդ գաղափարի շուրջ հայությանը համախմբող ուժ, մեծապես կարևորվում էր Էջմիածնի կաթողիկոսների դերը՝ հատկապես ռուսական զորքերի անդրկովկասյան արշավանքներին աջակցելու հարցում: Այդ նպատակով Ղուկաս Կարնեցու հետ ակտիվ բանակցում է հնդկահայ ազգային գործիչ Շահամիր Շահամիրյանը (1723-1798): Վերջինս կաթողիկոսին բացահայտ կշտամբում է հայ ազգային-ազատագրական շարժմանը չընդառաջելու մեջ: Ղուկաս Կարնեցու պատասխանը ներկայացնում էր հայկական իրականությունը, որը հեռավոր հնդկաստանաբնակ հայերի համար դժվար էր պատկերացնել: «Պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տէրանց լինել և զապահովութիւն ունել, որ խնամածութեամբ նոցա կարիցէին ձգտիլ առ երջանկութիւնս» [3],- գրում է կաթողիկոսը Շ. Շահամիրյանին՝ ավելացնելով, որ հայ ժողովուրդն անգամ պարսիկներին հավատարմորեն ծառայելով ապահով չէ, ուր մնաց՝ ապստամբության

[2] Դիվան Հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780-1785) 1984, 56:
[3] Տե՛ս Լեո 1923, 353, 380: Դիվան հայոց պատմության 2003, 488:

դեպքում: Նա նաև շեշտում էր թշնամու մեծաքանակ լինելը[4]:

Այս խոսքերով կաթողիկոսը բացահայտ դրսևորում էր ապստամբական շարժմանն իր դեմ լինելը: Այնուհետև Ղուկաս Կարնեցին անդրադառնում է Շ. Շահամիրյանի. «…հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն» [5] դատապարտող խոսքերին և պատասխանում, որ եթե հնդկահայ հայրենասերները Հայաստանով շրջագայեն, ականատես լինեն հայերի կացությանը, անօգնական վիճակին ու թշնամիների բռնություններին, ապա կհասկանան, թե ինչքան դժվար է պայքարել ազատության համար. «Մի՞թե յիմար իցեմք որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք»,[6]-հարցնում է կաթողիկոսը: Այդպիսով, Ղուկաս Կարնեցին պարզորոշ հասկացնում էր, որ հեռավոր Հնդկաստանում բնակվող հայերն աղոտ պատկերացում ունեն հայ ժողովրդի վիճակի ու պարսկական դաժան տիրապետության վերաբերյալ:

Հայտնի է, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բացասական դիրքորոշում ուներ 1771 թ. Մադրասում Շ. Շահամիրյանի հիմնադրած տպարանում լույս տեսած ազգային-ազատագրական բովանդակությամբ գրականության հանդեպ: Այժմ կարևոր էր Ղուկաս Կարնեցու վերաբերմունքը: Նա չնայած շատ հարցերում Սիմեոն Երևանցու գաղափարները կրողն էր, որոշ դեպքերում նրանից էապես տարբերվում էր[7]: Այդ իսկ պատճառով նա միջոցներ ձեռնարկեց, որ

[4] Տե՛ս Գրիգորյան 1958, 105: Դիվան հայոց պատմության 2003, 487:
[5] Լեո 1923, 353, 380: Դիվան հայոց պատմության 2003, 488:
[6] Դիվան հայոց պատմության 2003, 488:
[7] Հայտնի է, որ Շ. Շահամիրյանի խնդրանքով Ղուկաս Կարնեցին «արձակման գիր» է տվել Մադրասի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Մովսես Բաղրամյանին՝ վերջինիս ազատելով Սիմեոն Երևանցու բանադրանքից (տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 205):

Հայաստան բերվեն Մադրասի տպարանում տպագրված և Շ. Շահամիրյանի կողմից Նոր Ջուղա ուղարկված «Աշխարհացոյց Հայաստանեայցը»[8], Նադիր շահի պատմությունը[9] և Մադրասի հայ գաղութի 1783 թ. տպագրված կանոնադրությունը՝ «Տետրակ որ կոչի նշաւակ կառավարելոյ ինչս որբոց և առակ կտակ ննջեցելոց»[10]:

Շ. Շահամիրյանը որոշել էր նաև «Որոգայթ փառացի» օրինակներ ուղարկել կաթողիկոսին, վրաց Հերակլ Ա արքային (1744-1798) և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին (1773-1801)[11]: Շ. Շահամիրյանը 1787 թ. հոկտեմբերի 15-ին Մադրասից կաթողիկոսին գրում է. «…զի գրքունկն այն («Որոգայթ փառացը»-Հ. Ա.) է ելանելոց ի մենջ երիս օրինակօք՝ մի վասն իւր (Հերակլ արքային-Հ. Ա.) մի՝ վասն պատուականութեան քոյ և մի՝ վասն սրբակրօն տեառն Յովսէփեոս արքեպիսկոպոսի…»[12]:

Այդ գրքերից մեկի ճակատագիրն անհայտ է, իսկ եր-

---

[8] Այս «Աշխարհացոյցը» 1778 թ. Վենետիկում նրա պատվերով լույս տեսած «Աշխարհացոյց Հայաստանեայցն» էր (տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 562: 2003, 143, 274) :

[9] Գրքի վերնագիրն է՝ «Պատմագրութիւն վարուցն և գործոցն Նադըր շահ թագաւորին Պարսից հանեալ ի գրոց պատմութեան ազգին պարսից արարելոց յումեմնէ անգլիացւոյ մստր Նանուէ կոչեցելոյ»:

[10] Չնայած Սիմեոն Երևանցին 1776 թ. Շ. Շահամիրյանին նամակով դատապարտել էր նրա գրքերի համար (Սիմեոնի մահից հետո միայն Շ. Շահամիրյանը ձեռնամուխ եղավ «Որոգայթի» լրամշակմանը և մյուս հատորների տպագրմանը), Ղուկաս Կարնեցին, ինչպես տեսնում ենք, ոչ միայն բարեկամական կապեր էր պահպանում Շ. Շահամիրյանի հետ, այլև հետաքրքրված էր Մադրասի տպարանի գործունեությամբ (տե՛ս Иоаннисян 1989, 285): Ղուկաս Կարնեցին նամակագրական կապեր ուներ նաև Մադրասի հայ գործիչ, այնտեղի տպարանի աշխատանքների մասնակից Մովսես Բաղրամյանի հետ (տե՛ս Иоаннисян 1989, 248):

[11] Տե՛ս Иоаннисян 1989, 284.

[12] Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.) 1990, док. 239, 360.

կուսը 1788 թ. հասնում են Հ. Արղությանին: Նա դրանցից մեկն Աստրախանում ընդօրինակել է տալիս և կրկնօրինակն է ուղարկում Վրաստան[13]: Հավանաբար, գիրքը 1792 թ. կաթողիկոսին չէր հասել, քանի որ այդ թվականի օգոստոսի 16-ին Շ. Շահամիրյանին գրած նամակում նա նշում է, որ լսել են նոր գրքի՝ «Որոգայթ փառացի» մասին և հայտնում է, որ գիրքը դեռևս Էջմիածին չի հասել[14]:

Հոգևոր-մշակութային հարցերի քննարկումը Ղուկաս Կարնեցու և հնդկահայ գործիչների միջև

Առավել ծավալուն են Ղուկաս Կարնեցու հոգևոր-մշակութային բնույթի նամակները, որոնք տեղեկություններ են հաղորդում հնդկահայ մեծահարուստների միջոցով Էջմիածնի Մայր տաճարում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ: Դրանց մեջ գերակշռում են Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Ս. Աթոռի գործակալ Հոհանջան Գերաքյանին (Յոհանջան Հակոբյանի) ուղղվածները, քանի որ վերջինս մեծապես աջակցում էր Մայր Տաճարի շինարարական աշխատանքներին և մշակութային տարբեր նախաձեռնություններին: Այսպես, 1785 թ. Հ. Գերաքյանի միջոցներով նորոգվում են տաճարի շրջակա սալահատակը[15] և

[13] Տե՛ս Մնացականյան 1958, 156:

[14] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 732:

[15] Տե՛ս Աղանեանց 1899, ԾԲ: Այդ մասին հիշատակագրությամբ արձանագրություն է տեղակայվում ներքնահարկի զանգակատան արևմտյան դռան վրա. «Կամաւն Աստուծոյ նորոգեցան սրբոյ տաճարիս շուրջանակի սալայատակքն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, ծախիւք եւ ի Սուրաթ բնակեալ Գերազեանց բարեպաշտ Յօհանջան աղային վասն հոգւոյ իւրոյ եւ իւրայոցն՝ հօրն Յակոբին եւ մօրն Մէհրաբանին եւ նոցին ծնողացն՝ Գերաք աղային եւ Թագուհւոյն, Աղամալին եւ Վալիտային եւ եղբարցն՝ Աւետիքին, Գերաքին եւ

պարիսպը[16]: Նրա միջոցներով հիմնովին վերանորոգվում է նաև Սանահինի վանքը, 30 թուման[17] է տրամադրվում դրա համար բերքատու այգի գնելուն[18]:

Կաթողիկոսը Հ. Գերաքյանին պարբերաբար տեղեկություններ է հաղորդում արված և կատարվող շինարարական աշխատանքների վերաբերյալ: Այսպես, 1789 թ. գրած նամակներից պարզվում է, որ 1788 թ. սեղանատան մեծ մասը, որի պատերն ու առաստաղը խախտվել էին, սրբատաշ քարով նորոգվել է, իսկ դրա վրա ավելացված վերնահարկի կառուցումը դեռ անավարտ է և նախատեսվում է առաջիկա գարնանը շարունակել[19]: Սեղանատան վրա կառուցվում են մի քանի սենյակներ և շտեմարան:

Վանքի արևելյան խցի վերանորոգումը հետաձգելու առնչությամբ Ղուկաս Կարնեցին Հ. Գերաքյանին գրում է. «…երկիրս մարդապակաս է եւ անհանգիստ, եւ այլազգիքն իբրեւ զքաղցեալ գազանս զաչս իւրեանց առ մեզ յառեալ ունին, եթէ համարձակիցիմք զամենայն կամեցեալսն մեր յառաջացուցանել, նոցա պատճառ լինի առաւել եւս ագահաբար պահանջմունս առնելոց»[20]: Նա 1789 թ. Հ. Գերաքյանին տեղեկացնում է, որ շատ վանքեր լեզգիների արշավանքից ի վեր ամայացել են, իսկ դրանց մի մասն անգամ զրկվել է այգինե-

---

Աբրահամին եւ քեռցն՝ Ազիզին, Թագուհւոյն եւ Խաթունին եւ կնոջն Կիլիստանին եւ դստերացն Վալիտային եւ Թիրվանտային եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի: ՌՄԼԴ (1785) թուին (Հայոց)» (տե՛ս Շահխաթունեանց 2014, 29):

[16] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 322: Ճեմարանցի 1951, 31:

[17] 100 թումանը հավասար էր ռուսական մոտ 2 ռուբլի 85 կոպեկի:

[18] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 449:

[19] Տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 38: 2003, 412, 442, 450:

[20] Դիվան հայոց պատմության 2003, 450:

րից[21]:

Ղուկաս Կարնեցու նամակները տեղեկություններ են հաղորդում նաև նրա տպագրական գործունեության վերաբերյալ, ինչը պատմագիտության մեջ քիչ է ուսումնասիրված: Դեռևս 1788 թ. հունիսի 21-ին և 1789 թ. փետրվարին Ղուկաս Կարնեցին Սուրաթ քաղաքում Ս. Աթոռի նվիրակ Եփրեմ վարդապետին գրում է, որ Հ. Գերաքյանին խոստացել է ի հիշատակ նրա ընտանիքի անդամների «Շարական» ու «Մաշտոց» տպել[22]: Այդ գրքերը Հ. Գերաքյանի ընտանիքի հիշատակությամբ տպագրելուց հետևում է, որ դրանց մեկենասը նա էր:

Ղուկաս Կարնեցին 1789 թ. Հ. Գերաքյանին գրած նամակներում բազմիցս հայտնում է, որ «Շարական» ու «Մաշտոց» տպելը դեռևս ուժի մեջ է և որ դրանք տպագրվելու են ի հիշատակ նրա և իր ընտանիքի[23]: Նա նաև գրում է, որ «Ճաշոց գրքի» տպագրությունն առայժմ հնարավոր չէ, քանզի գրքի «պարագայքն բազումք են»[24]: Նամակից կռահում ենք, որ կաթողիկոսն ու Հ. Գերաքյանը խորհրդակցել են նաև «Ճաշոց» տպագրելու ուղղությամբ: Եփրեմ վարդապետին գրած վերևում նշված 1888թ. հունիսի 21-ի նամակում նա դարձյալ գրում է, որ «Ճաշոցն» առայժմ հնարավոր չէ տպել՝ ամենատարբեր պատճառներով, որոնք չի մանրամասնում[25]: Վերջապես 1794 թ. Եփրեմ վարդապետին Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է, որ «Մաշտոցի» տպագրությունը վերսկսվել է, և

---

[21] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 449:
[22] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 434-445:
[23] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 432:
[24] Դիվան հայոց պատմության 2003, 450:
[25] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 374:

առաջին օրինակներից ըստ նախնական խոստման վեց հատ ուղարկվել է Հ. Գերաքյանին[26]:

Էջմիածնի տպարանում տպված գրքերը մեկենասներից բացի, ուղարկվում էին նաև տեղի այլ հայ գործիչների: Դրանք նվիրաբերվում կամ վաճառվում էին: Այսպես, «Խորհրդատետրերից»[27] մեկը պետք է ուղարկվեր Սուրաթ՝ Գերաքյանին, երեքը Մադրաս՝ Շ. Շահամիրյանին, 5-ը՝ նվիրակ Եփրեմ վարդապետին, 1-ը Կալկաթա՝ Խաչիկ աղա Առաքելյանին: «Ատենի ժամագրքի» («Ատենիի»)[28] 100 օրինակ և «Շարականի» երկու հատոր ևս ուղարկվում Հնդկաստան[29]: Ղուկաս Կարնեցին 1787 թ. օգոստոսի 25-ին Շ. Շահամիրյանին գրում է, որ նվիրակի հետ «Պարտավճար»[30] և «Ատենի» են առաքել Հնդկաստան, իսկ «Հովսեպոսի պատմագրքի»[31] օրինակները ևս կազմվելուց հետո առաջիկայում կառաքվեն[32]:

Գ. Աղանյանցը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղուկաս Կարնեցու օրոք է Մադրասում լույս տեսել առաջին

---

[26] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. Հվր 4538, թ. 17ա:

[27] Գրքի ամբողջական անվանումն է «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց»:

[28] «Ատենի ժամագիրք» կամ ուղղակի «Ատենի» («Գիրք ժամանակագրութեանց սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց եւ կարգաւորութեան սաղմոսացն Դաւթի մարգարէին»):

[29] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, LXX, LXXIV-LXXV (ներածություն):

[30] «Պարտավճար գիրքը» բովանդակում էր Սիմեոն Երևանցու խրատներն ու հորդորները՝ ուղղված ժողովրդին ու հոգևորականներին, կաթողիկոսի դավանաբանական, աստվածաբանական տեսությունները, նրա ժխտողական վերաբերմունքը կաթոլիկ դավանաբանության դեմ և այլն:

[31] Տե՛ս Հովսեփոս Եբրայեցու «Պատմությունը» կամ «Գիրք պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս Պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս և աւերման Երուսաղէմի»:

հայկական լրագիր «Ազդարարը», կարծիք է հայտնել, որ դրանում իր դերն ունի նաև կաթողիկոսը: Նա գրում է, որ ըստ իր լսածի Հնդկաստանի հայաբնակ վայրերում Ղուկաս Կարնեցու հղած գրություններ կան, որոնց համաձայն նա է այդ լրագրի խմբագիր Հարություն Տեր-Շմավոնյանին խորհուրդ տվել ձեռնարկելու հրատարակչական գործունեություն: «Եթե ստույգ է այս լուրը, այն ժամանակ Ղուկասի արժանիքը կրկին չափով պիտի բարձրանա ամեն մի հայի աչքում»[33],-եզրահանգում է Գ. Աղանյանցը: Գ. Աղանյանցի այս ենթադրությունը Մ. Օրմանյանին հիմք է տվել գրելու, որ Ղ. Կարնեցուն է վերագրվում Հ. Շմավոնյանի կողմից հրատարակումը ոգեշնչողի դերը[34]:

Հ. Գերաքյանի և Ղուկաս Կարնեցու նամակագրությունը սուղ տեղեկություններ է հաղորդում նաև քննվող ժամանակաշրջանում Էջմիածնի վանքում դպրոցական կյանքի վերաբերյալ: Ղուկաս Կարնեցու 1791 թ. դեկտեմբերի 31-ին Հ. Գերաքյանին գրած նամակից տեղեկանում ենք, որ նա կաթողիկոսին առաջարկել էր իր միջոցներով Ս. Գայանեում պահել՝ «ուսուցիչ արտաքնոց գրեաց, որ թէ աստուստ խնդրողաց և թէ յայլուստ եկողաց՝ թէ վանական իցեն և թէ աշխարհական, անխնայօրէն դաս ասասցէ և այլն»[35]: Հ. Գերաքյանը պարտավորվում էր հոգալ դպրոցի ծախսերը՝ տարեկան 500 ռուփի: Առաջարկությունն արժանանում է Ղուկաս Կարնեցու հավանությանը, որը որպես ուսուցիչ Կ. Պոլսից հրավիրում է վարժապետ Թեոդորոս սարկավագին: Վերջինս շուտով ժա-

---

[32] Տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 379: 2003, 276:
[33] Աղանեանց 1899, ԾՁ:
[34] Տե՛ս Օրմանեան 1914, 3236:
[35] Դիվան հայոց պատմության 2003, 681:

մանում է[36]:

Ղուկաս Կարնեցին Գերաքյանին հղած նամակներում առաջ է քաշում նաև դպրոցական նոր շենքի կառուցման անհրաժեշտությունը, թեև վերջինիս տեղեկացնում է վտանգների մասին. «վասն արտաքնոյ դասաւսացութեանն, որ գրեալ էիր ի վանսն սրբոյ Գայիանեան լինիլ, բարի է և ազնիվ միտքդ, բայց այնպիսի գործառնութիւն անդէն ոչ առնու զհաստատութիւն եւ ոչ տեւէ ընդ երկար, զի որպիսութիւն անտերունջ երկրիս, որ ի բազմիցս անգամ վրդովիլն ի խռովութեանց պէսպէս վնասք յառաջանան…»[37]: Փաստորեն, կաթողիկոսը սկզբունքորեն դեմ չէր նոր դպրոցի բացմանը, սակայն պատկերացնում էր դրա գոյությանն սպառնացող բազմաբնույթ վտանգները: Նա Գերաքյանին գրում էր, որ նմանօրինակ գործը պետք է կազմակերպվի Մայր Աթոռի պարսպներից ներս, քանզի «…յայլ ուրեք ոչ վարի եւ ոչ արդինաւորի»[38]:

Այդ դպրոցն ամենայն հավանականությամբ չբացվեց: Ուշագրավ է սակայն, որ կաթողիկոսը դրական պատասխանի արժանացրեց այն առաջարկը, որով նախատեսվում էր դպրոցում նաև աշխարհիկ գիտելիքներ ուսուցանել: Ավելին, 1791 թ. դեկտեմբերի 31-ին Հ. Գերաքյանին ուղղած նամակում գրելով վանքի հետ կապված շինարարական ծրագրերի վերաբերյալ, Ղուկաս Կարնեցին հայտնում էր դպրոցի համար նոր շենքի կառուցման իր նպատակի մասին: Նա նախատեսել էր Մայր Տաճարի արևելյան կողմում գտնվող վերնահար-

36 Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 683:

37 Դիվան հայոց պատմության 2003, 682:

38 Դիվան հայոց պատմության 2003, 682:

կը, որը նախկինում որպես ամառային դպրոց էր ծառայել, վերակառուցել և ներքին հատվածում ձմեռային, իսկ վերին մասում՝ ամառային դպրոցներ բացել: «Որպէս զի յառաջին դպրոցին մանկունք զսաղմոս, զշարական, եւ զկտակարան եւ զայլ այնպիսի գրեանս դաս առցեն եւ ընթերցցեն: Իսկ ի նորոգ շինելի դպրոցիս չափահասակ անձինք զքերականութիւն զտրամաբանութիւն եւ զայլ արտաքին գրեանս ուսցին»[39],- գրում է Ղուկաս Կարնեցին Հ. Գերաքյանին, նշելով, որ սպասում է դրական պատասխանի՝ սկսելու աշխատանքները:

Ինչպես նշվեց, Հնդկաստանի թեմը կարևորվում էր Էջմիածնի մի պատկառելի հասույթն ապահովելու տեսանկյունից: Դրանից ելնելով Ղուկաս Կարնեցին մեծ ջանքեր էր գործադրում՝ ձեռք բերելու Հնդկաստանի նվիրակությունից ստացվելիքը[40]: Հ. Գերաքյանին 1786 թ. մայիսին Ղուկաս Կարնեցու ուղարկած նամակից տեղեկանում ենք, որ հնդկահայ Քամալ Ստեփանյանը 460 ռուփի էր կտակել Էջմիածնին և կտակարար կարգել Հ. Գերաքյանին: Վերջինս գումարն ուղարկել էր Բասրա՝ Հ. Բեթղեհեմյանին, իսկ նա՝ «ի մեծն Պոլիս փօլիցայ առնելով, ձեռամբ տեղւոյ նուիրակին մերոյ՝ Իսահակ աստուածաբան վարդապետին, հասոյց ի Սուրբ Աթոռս»[41]:

Հայտնի է, որ Ղուկաս Կարնեցին 1795 թ. նամակ է գրել կալկաթաբնակ Աստվածատուր Մուրատխանյանին՝ նրա եղբոր կտակն ստանալու համար[42]: Ս. Աթոռին Մադրասից

---

[39] Դիվան հայոց պատմության 2003, 682:

[40] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հմր 4538, թ. 24ա:

[41] Գրիգորյան 1995, 92:

[42] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հմր 4538, թ. 37ա:

նվերներ էր ուղարկում նաև Շահամիր Շահամիրյանը[43]:

Դրամական մեծ նվիրատվություններ կատարելու համար կաթողիկոսը շնորհակալական նամակներ է հղել Հնդկաստանի Բոմբեյ, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Բանդերբուշեռ, Սեիդապատ, Ագբարաբադ, Դաքքա և այլ քաղաքներում բնակվող հայերին[44]: Նա նաև հնդկահայերին կոչ էր անում սատարել հայկական տարբեր հոգևոր կառույցներին (օրինակ, աջակցել Նոր Նախիջևանում հայկական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումն ավարտին հասցնելու գործին)[45]:

Ղուկաս Կարնեցին 1787 թ. սեպտեմբերին հնդկահայերին ուղղված «ժողովարարության կոնդակ»՝ դրամական հանգանակության թուղթ է տալիս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբաններին, քանի որ վանքը գտնվում էր աղքատ վիճակում ու այլազգիների ասպատակությունների ներքո: Կաթողիկոսը ներկայացնում է վանքի երբեմնի հարուստ ու ճոխ և ներկա աղքատ ու անմխիթար վիճակը[46]:

Ղուկաս Կարնեցու նամակների մի մասը հայաբնակ տարբեր վայրերի, այդ թվում Հնդկաստանի հայ հոգևորականներին ուղղված կոչեր են: Նա պահանջում էր չզբաղվել աշխարհիկ գործունեությամբ, հատկապես՝ առևտրով, պարսավում էր վատաբարո կամ բնակիչներին կողոպտող հոգևոր գործիչների գործունեությունը, ժողովրդից պահանջում

---

[43] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հմր 4538, թ. 39ա:

[44] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հմր 4538, Հմր 4482, թ. 65ա-65բ, 67ա-71ա, 100ա: Դիվան հայոց պատմության 2003, 127-129:

[45] Տե՛ս ՄՄ, ձեռ. 4567, թ. 14ա:

[46] Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 374: Գրիգորյան 1995, 89:

էր նմաններին հոգևոր տուրք չտալ[47]:

Եզրակացություններ

Այսպիսով, Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու նամականին՝ ուղղված հնդկահայ գործիչներին, կարևոր սկզբնաղբյուր է, բացահայտում է Էջմիածնի ու հնդկահայ թեմի առնչությունները: Թեմը, հատկապես տնտեսական ու մշակութային հարցերում, ըստ ամենայնի աջակցում էր Մայր Աթոռին:

Նամակները նախևառաջ բացահայտում են հնդկահայ գործիչների ու հայոց կաթողիկոսի հայացքների հակադարձությունը, որը դրսևորվեց հատկապես ազգային ազատագրական շարժումն աջակցելու հարցրում: Ղուկաս Կարնեցին սակայն, զգուշություն ու զսպվածություն դրսևորեց այդ հարցում՝ կասկածելով, որ ռուսները կկարողանան գրավել Երևանի խանությունը և հայ բնակչությունը չի հայտնվի պարսկական վրեժխնդրության թիրախում:

Ինչ վերաբերվում է Ղուկաս Կարնեցու մշակութային գործունեությանը, ապա սկզբնաղբյուրներն այդ հարցում սակավախոս են: Դա նախևառաջ բխում է նրանից, որ նա իր տպագրական, դպրոցաշինական, Մայր Աթոռի վերանորոգչական ու կառուցողական ձեռնարկումներին անդրադառնում էր այնքանով, որքանով փորձում էր հայազգի գործիչներին ոգևորել՝ հովանավորելու նմանօրինակ աշխատանքները:

Նրա բազմաթիվ գրությունները վկայում են, որ անգամ

[47]Տե՛ս ՄՄ Հմր 2922, թ. 56բ, ձեռ. Հմր 6298, թ. 8ա: Դիվան հայոց պատմության 1984, 409, 410: 2003, 720:

շատ ծանր պայմաններում Ղուկաս Կարնեցին կարողանում է նամակագրությունը պահպանել հեռավոր Հնդկաստանի հետ, տեղեկանալ այնտեղի հայերի կյանքի ու գործունեության մասին, Մայր Աթոռ հասցնել տեղի թեմի հոգևոր հասույթը, Էջմիածնում տպագրված գրքեր առաքել Հնդկաստան և այլն:

Նամակները միաժամանակ հնդկահայ գործիչներին կոչ են անում սիրով ու բարեկամաբար տրամադրվել դեպի Մայր Աթոռն ու հայ ժողովուրդը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, ձեռագիր Հմր 2922, Հմր 4482, Հմր 4538, Հմր 4567, Հմր 6298:

Դիվան հայոց պատմության 1984, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, հ. Ա, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:

Դիվան հայոց պատմության 2003, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, հ. Բ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 845 էջ:

Գրիգորյան Վ. 1958, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 226 էջ:

Գրիգորյան Վ. 1995, էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում.- «Էջմիածին», Զ-Է, էջ 76-93:

Աղանեանց Գ. 1899, Դիւան հայոց պատմութեան, Դ, Թիֆլիս, տպ. Տ. Ռոտինեանցի, 683 էջ:

Լեո 1973, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 638 էջ:

Ճեմարանցի (Հովսեփ Գրիգորյան) 1951, Ղուկաս Կարնեցի կաթողիկոս.- «Էջմիածին», Ը, էջ 29-34:

Մնացականյան Ս. 1958, 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը.- «Բանբեր Մատենադարանի», թիվ 4, էջ 160:

Շահխաթունեանց Յովհ. 2014, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, աշխատասիրությամբ Ա. Տեր-

Ստեփանյանի, Ս. Էջմիածին հրատ., 560 էջ:
Օրմանեան Մ. 1914, Ազգապատում, հ. Բ, Կոստանդնուպոլիս, 3376 էջ:
Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.) 1990, под ред. М. Нерсисяна, т. IV, Ереван, , Изд. АН Арм. ССР, 590 с.
Иоаннисян А. 1989, Иосиф Эмин, Ереван, изд. АН, Арм. ССР, 291 с.

Асмик О. Амирджанян, *Институт истории НАН РА, к.и.н.,* **Переписка Гукаса Карнеци с армянами в Индии (конец XVIII в.)**

Резюме

Переписка католокоса Гукаса Карнеци с видним армянскими деятелям Индии, архиереями, содержит богатый материал для изучения социально-экономической ситуации Первопрестольного св. Эчмиадзина, духовной жизни армянской епархий Индии, политической ситуации Восточной Армении и т.д.

В некоторых письмах обсуждаются вопросы национально-освободительного движения армянского народа и освобождении Армении от турецко-персидского иго. В письмах выражены разнообразия политических взглядов разных армянских деятелей, их переживания и отношение к политическим и религиозным проблемам армянского народа. Письма интересны для изучения национально-освободительного движения армянского народа.

Письма отражают также деятельность Католикоса Всех армян в деле образования и книгопечатия. Во время предводительства Гукас Карнеци упад и подъем школы в Св. Эчмиадзине были обусловлены целым рядом внутренних и внешних факторов. В этот период создание культурно-просветительских учреждений сталкивалось с трудностями из-за многочисленных экономических, социальных и политических проблем.

Переписка содержит богатый материал также для изучения строительной деятельности Карнеци. Основные строительные расходы были покрыты известными армянами Индии. Армянская община Индии также финансировала строительство кафедрального собора Св. Эчмиадзин.

Ключевые слова: Католикос Всех армян, Армянская епархия, политический, Кафедральный Собор Св. Эчмиадзин, переписка, государственный.

Hasmk H. Amirjanyan, *Institute of Hystory of the NAS RA, Cd. of Sci. in History,* **The correspondence of Ghukas Karnetsi and Indian Armenians (the end of the 18th century)**

Summary

The correspondence of Catholicos Ghukas Karnetsi with prominent Armenian figures of India, bishops, contains rich material for studying the socio-economic situation of the Mother See of St. Echmiadzin, the spiritual life of the Armenian dioceses of India, the political situation in Eastern Armenia, etc.

Some of the letters discuss the issues of the national liberation movement of the Armenian people and the liberation of Armenia from the Turkish-Persian yoke. The letters express the diversity of political views of different Armenian figures, their experiences and attitude to the political and religious problems of the Armenian people. The letters are interesting for studying the national liberation movement of the Armenian people.

The letters also reflect the activities of the Catholicos of All Armenians in the field of education and printing. During the leadership of Ghukas Karnetsi, the decline and rise of the school in St. Etchmiadzin were due to a number of internal and external factors. During this period, the creation of cultural and educational institutions faced difficulties due to numerous economic, social and political problems.

The correspondence contains rich material also for studying the construction activities of Karnetsi. The main building costs were covered by the famous Armenians of India. The Armenian community of India also financed the construction of the Cathedral of St. Etchmiadzin.

Key words: Catholicos of All Armenians, Armenian diocese, political, St. Etchmiadzin Cathedral, correspondence, state.